

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐՈՎ ԱՌԱՔՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները (այսուհետ՝ «Կողմեր»),

հիմք ընդունելով 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Միասնական մաքսային տարածք ստեղծելու և մաքսային միություն ձևավորելու մասին» համաձայնագիրը և 2009 թվականի նոյեմբերի 27-ի Մաքսային միության մաքսային օրենսգրքի վերաբերյալ համաձայնագիրը,

ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով և նորմերով,

նպատակ ունենալով պարզեցնել միջազգային փոստային առաքանիներով Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետությունների միջև առաքվող ապրանքների մաքսային ձևակերպումները և մաքսային հսկողությունը,

համաձայնեցին հետևյալի մասին՝

#### Հոդված 1

Սույն Համաձայնագրով սահմանվում են միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մաքսային ձևակերպումների առանձնահատկությունները, որոնք իրականացվում են Մաքսային միության մաքսային տարածք ժամանելու այդ տարածքից դուրս գալու, ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգ կիրառելու դեպքում:

Սույն Համաձայնագրով չեն կարգավորվում Մաքսային միության մաքսային սահմանով դիվանագիտական փոստի և հյուպատոսական ճամպուրակի (վալիզայի) տեղափոխման հետ կապված հարցերը:

#### Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետևյալ տերմինները՝

ա) փոստային փաթեթ՝ պիտակ ունեցող պարկ կամ կապարակնքված կամ առանց դրա մի քանի պարկ և այլ տարաներ, որոնք պարունակում են փոստային առաքանիներ և (կամ) տարաներ, որոնց փոխանակումը կատարվում է Համաշխարհային փոստային միության անդամ պետությունների փոստային ծառայությունների միջազգային փոստափոխանակման վայրերում (հաստատություններում)։

բ) Միության ներսում փոստային առաքանիներ՝ Կողմ հանդիսացող մի պետությունից Կողմ հանդիսացող մյուս պետություն այդ թվում՝ Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքով առաքվող փոստային առաքանիներ։

գ) նշանակված օպերատոր՝ փոստային ծառայություններ իրականացնելու և Համաշխարհային փոստային միության ակտերից բխող իր տարածքում դրանց հետ կապված պարտավորությունները կատարելու համար Համաշխարհային փոստային

միության անդամ պետության կողմից նշանակված պետական կամ ոչ պետական կազմակերպություն. :

Սույն Համաձայնագրում կիրառված այլ տերմինները կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Համաշխարհային փոստային միության ակտերով սահմանված իմաստներով:

### Հոդված 3

Միջազգային փոստային առաքանիներ պարունակող փոստային փաթեթների՝ Մաքսային միության մաքսային սահման ժամանման վայր և նման տարածքից միջազգային փոստային առաքանիներ պարունակող փոստային փաթեթների ուղարկման վայր են համարվում Կողմ հանդիսացող պետության պետական (մաքսային) սահմանների անցակետերը, որոնք սահմանված են այդ պետության օրենսդրությամբ:

Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքները, որոնք ժամանում են Մաքսային միության մաքսային տարածք և ուղարկվում են նման տարածքից միջազգային փոստափոխանակման վայրերում (հաստատություններում), սահմանվում են Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ:

Մաքսային միության մաքսային տարածքով միջազգային փոստային առաքանիների փոխադրումը, այդ թվում՝ երթուղու ճանապարհին փոխաբեռնման (վերաբեռնման) միջոցով, իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և սույն Համաձայնագրի դրույթներով սահմանված կարգով:

Մաքսային միության մաքսային տարածք միջազգային փոստային առաքանիներով փոխադրվող ապրանքների բացթողնման, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով իրականացվող բացթողումների մաքսային ձևակերպումներն իրականացվում են միջազգային փոստային առաքանիների նշանակման երկիրը հանդիսացող Կողմ պետության մաքսային մարմինների կողմից Կողմերի իրավասու մարմինների կողմից սահմանված կարգով, մասնավորապես՝ բելառուսական կողմից՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից, ղազախական կողմից՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից և ռուսական կողմից՝ Մաքսային դաշնային ծառայության կողմից (Ռուսաստանի ՄԴԾ):

Մաքսային միության մաքսային տարածքից միջազգային փոստային առաքանիներով փոխադրվող ապրանքների բացթողնման, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով իրականացվող բացթողումների մաքսային ձևակերպումներն իրականացվում են միջազգային փոստային առաքանիների նշանակման երկիրը հանդիսացող Կողմ պետության մաքսային մարմինների կողմից Կողմերի իրավասու մարմինների կողմից սահմանված կարգով, մասնավորապես՝ բելառուսական կողմից՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից, ղազախական կողմից՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից և ռուսական կողմից՝ Մաքսային դաշնային ծառայության կողմից (Ռուսաստանի ՄԴԾ):

## Հոդված 4

Մաքսային միության մաքսային տարածք միջազգային փոստային առաքանիների ժամանման կամ այդ տարածքից ուղարկման դեպքում, փոխադրողի կողմից ներկայացվող՝ փոխադրվող ապրանքների մասին տեղեկությունները սահմանափակվում են Համաշխարհային փոստային միության ակտերով սահմանված և միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ ուղեկցող փաստաթղթերում ներառված տեղեկություններով՝

միջազգային փոստային առաքանին ուղարկողի և ստացողի անվանման (ուղարկման փոստափոխանակման հաստատություն, նշանակման փոստափոխանակման հաստատություն).

ապրանքների համաքաշի.

բեռի միավորների քանակի մասին:

Ներմուծման և (կամ) արտահանման ժամանակ Մաքսային միության մաքսային տարածքով արգելված և (կամ) սահմանափակ տեղափոխման ապրանքների առկայության մասին տեղեկությունները ներկայացվում է փոխադրողի կողմից, եթե փոխադրողը ունի նման տեղեկություններ:

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 159-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկությունները ներկայացվում են փոխադրողի կողմից՝ պայմանավորված տրանսպորտային միջոցի տեսակով:

Համաշխարհային փոստային միության անդամ պետությունների օպերատորների կողմից սահմանված արգելքները և սահմանափակումները պահպանելու նպատակով կարող են տրամադրվել առաքվող ապրանքների մասին նախնական տեղեկություններ: Մաքսային նպատակներով նախնական տեղեկություններ ներկայացնելու և կիրառելու կարգը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսդրության այլ ակտերով:

Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների նկատմամբ սահմանափակումների պահպանման մասին հաստատող փաստաթղթերը մաքսային մարմինն ներկայացվում են շահագրգիռ անձանց կամ նշանակված օպերատորների կողմից միջազգային փոստափոխանակման վայրում (հաստատությունում) կամ ներկայացվում են շահագրգիռ անձի կողմից՝ մաքսային մարմնի կողմից սահմանված մեկ այլ վայրում մ մաքսային հայտարարագրման և ապրանքի բացթողման ժամանակ:

## Հոդված 5

Մաքսային միության մաքսային տարածքով միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների ուղարկման թույլտվությունը ձևակերպվում է մաքսային մարմնի կողմից միջազգային փոստափոխանակման վայրում (հաստատությունում):

Մաքսային միության մաքսային տարածքով միջազգային փոստային առաքանիների ուղարկման թույլտվությունը ձևակերպվում է մաքսային մարմնի կողմից՝ Կողմ հանդիսացող պետությունների պետական (մաքսային) սահմանային անցակետում միջազգային փոստային առաքանիներով փոխադրվող ապրանքների ուղարկման մասին թույլտվության հիմքով:

## Հոդված 6

Երբ միջազգային փոստային առաքանին և (կամ) միջազգային փոստային առաքանիով ապրանքները առաքվում են «տարանցիկ փոխադրում» մաքսային ընթացակարգով, ապա ուղարկման վայրի մաքսային մարմինը որպես մաքսային հայտարարագիր կարող է ընդունել հետևյալ փաստաթղթերից մեկը՝

ա) «մաքսային տարանցում» ընթացակարգով լրացված հայտարարագիրը՝ գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով, որը պարունակում է սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները.

բ) CN 37, CN 38, CN 41, CN 46, CN 47 վճարման անդորրագրեր, որոնց ձևաչափը սահմանվում է Համաշխարհային փոստային միության ակտերով և որոնք ուղեկցում են միջազգային փոստային առաքանին դրանց փոխադրման ժամանակ ու պարունակում են տեղեկություններ սահմանված սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով այն դեպքերում, եթե՝

միջազգային փոստային առաքանիներով տեղափոխվող ապրանքների առաքման վայրը՝

ուղարկման վայրի մաքսային հսկողության գոտին է,

միջազգային փոստափոխանակման վայրում (հաստատությունում) մաքսային հսկողության գոտին է,

միջազգային փոստային առաքանու փոխաբեռնման (վերաբեռնման) վայրում մաքսային հսկողության գոտին կամ մաքսային մարմնի գտնվելու վայրն է (երբ ապրանքը տեղափոխվում է միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն) կամ ուղարկման վայր),

ժամանման վայրում մաքսային հսկողության գոտին է ( Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքով Մաքսային միության ապրանքների տեղափոխման ժամանակ),

գ) այլ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, որոնք ներառում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:

Միջազգային փոստային առաքանիների և (կամ) միջազգային փոստային առաքանիով առաքվող ապրանքների նկատմամբ, որոնց փոխադրումը իրականացվում է նշանակված օպերատորների կողմից կամ նրանց հասցեով, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգ կիրառելիս, այդ ապրանքների համար մաքսատուրքի, հարկերի վճարում չի պահանջվում:

Միջազգային փոստային առաքանիների և (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն) չհասնելու դեպքում, մաքսային մարմնի առջև, որին նախորդում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը, մաքսատուրքի, հարկերի վճարման համապարտ պարտավորություն կրում է միջազգային փոստային առաքանու նշանակման երկիր հանդիսացող Մաքսային միության անդամ պետությունների նշանակված օպերատորը:

Ընդ որում, միջազգային փոստային առաքանիները և (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը և տեղ չեն հասել նշանակման մաքսային մարմին, մաքսատուրքի և հարկերի վճարման և գանձման նպատակներով համարվում են Մաքսային միության այն անդամ պետությունների տարածքում գտնվող առաքանիներ և

ապրանք, մինչև որի մաքսային մարմին սահմանված է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը:

Միջազգային փոստային առաքանիների և (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների՝ միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն) չհասնելու դեպքում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման ենթակա գումարը հաշվարկվում է ընդհանուր դրույքաչափով՝ 4 եվրո միջազգային փոստային առաքումներով առաքվող 1 կգ համաքաշով ապրանքի համար: Մինևույն ժամանակ համաքաշով ապրանքների քաշի մեջ չի մտնում հետևյալ տիպի միջազգային փոստային առաքանիները՝

- օդային փոստով առաքվող նամակները.
- փոստային քարտերը և նամակները.
- սեկոգրամները:

### Հոդված 7

Առաքման մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով լրացված հայտարարագիր ընդունվող «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով լրացված հայտարարագիրը, ինչպես նաև մյուս տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը պետք է ներառեն տեղեկություններ՝

ուղարկողի (ուղարկման երկրի նշանակված օպերատորի), միջազգային փոստային առաքանիներ ստացողի (նշանակված փոստափոխանակման հաստատության) մասին.

առաքման երկրի, միջազգային փոստային առաքանու նշանակման երկրի (առաքման փոստափոխանակման հաստատության երկիր, նշանակման փոստափոխանակման հաստատության երկիր) մասին.

փոխադրողի մասին.

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մասին.

փոստային փաթեթի համարի մասին.

համաքաշի մասին.

բեռի միավորների քանակի մասին.

ճանապարհին ապրանքների նախատեսված փոխաբեռնման կամ այլ բեռնափոխադրման գործողությունների մասին.

միջազգային փոստային առաքանու նշանակման կետի (նշանակման փոստափոխանակման հաստատության) մասին:

### Հոդված 8

Միության ներսում փոստային առաքանիները չեն ենթարկվում մաքսային հսկողության, դրանց նկատմամբ չեն կիրառվում մաքսային ընթացակարգեր և մաքսային ձևակերպումներ:

Կողմ հանդիսացող պետությունների նշանակված օպերատորները ապահովում են՝

Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների տեղեկացվածությունը նշանակված օպերատորների և այդ օպերատորների կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցների մասին.

միջազգային փոստային առաքանիների և Միության ներսում փոստային առաքանիների առաքումը տարբեր փոստային փաթեթներով՝ առանձին ուղեկցող փաստաթղթերով:

Միության ներսում փոստային առաքանիների նույնականացումը:

Նշանակված օպերատորները տեղեկացնում են Միության ներսում փոստային առաքանիների նույնականացման մասին Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմիններին:

Եթե միջազգային փոստային առաքանիները առաքվում են Միության ներսում իրականացվող փոստային առաքանիների հետ մեկ փոստային փաթեթով, ապա նման փոստային փաթեթները տեղափոխվում են Մաքսային միության մաքսային տարածքով մաքսային հսկողությամբ՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն:

### **Հոդված 9**

Մաքսային նպատակով, միջազգային փոստային առաքանիներ չեն համարվում այն առաքանիները, որոնք ուղեկցվում են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերով, որոնց առաքման վայրը Մաքսային միության մաքսային տարածք ժամանելիս տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի համաձայն միջազգային փոստափոխանակման վայրից (հաստատությունից) այլ վայր է:

### **Հոդված 10**

Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

### **Հոդված 11**

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

## Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կառավարությունների կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի հունիսի 18-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր հաստատված պատճենը:

**Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից**

(ստորագրություն)